Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային
կենտրոնի տնօրեն
_____Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱԺԻՆ

2016 Թ.
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ասպիրանտուրայի բաժինը հաշվետու տարում կազմակերպել և իրականացրել է 2016-2017 թթ. ՀՀ ԳԱԱ առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը: Արդյունքում ընդունվել 32 առկա և 21 հեռակա ուսուցմամբ ասպիրանտ և 1 վճարովի հիմունքներով (արտերկրացի) ասպիրանտ:

Տարեսկզբին ԳԱԱ ասպիրանտուրայում պետական պատվերով սովորում էր 167 ասպիրանտ, այդ թվում՝ 95-ը առկա, 72-ը հեռակա, վճարովի հիմունքներով՝ 20 ասպիրանտ, որից 15-ը արտերկրացի: Հաշվետու տարում ավարտել է 60 ասպիրանտ՝ 33-ը առկա, 20-ը հեռակա և 7 արտերկրացի:

Ներկայումս պետպատվերով սովորող ասպիրանտների ընդհանուր թիվը կազմում է 169, որից 96-ը առկա, 73-ը հեռակա, վճարովի հիմունքներով՝ 15 ասպիրանտ, որից 10-ը արտերկրի քաղաքացիներ են: Հայցորդների թիվը 270 է. 143-ը՝ վճարովի հիմունքներով, 127 –ն՝ անվճար (ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում որակավորման քննություններին նախապատրաստելու և դրանք հանձնելու նպատակով ասպիրանտների և հայցորդների համար կազմակերպվել են գարնանային և աշնանային դասընթացներ "Օտար լեզու" (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), "Ինֆորմատիկա" և "Փիլիսոփայություն" առարկաներից: Արդյունքում որակավորման քննություն են հանձնել՝ օտար

լեզվից՝ 14, փիլիսոփայությունից՝ 27, ինֆորմատիկայից 63 ասպիրանտ և հայցորդ:

Բաժնը հաշվետու տարում կատարել է “ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ասպիրանտուրայի ընդունելության, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման” կանոնակարգի լրամշակում՝ ներառելով ՀՀ ԿԳ նախարարության և ԲՈՀ-ի կանոնակարգերում կատարված փոփոխությունները: Կատարվել է ասպիրանտների և հայցորդների ուսումնական գործընթացի, ընթացակարգերի պատրաստման գիտակրթական ծրագրի մեթոդական փաստաթղթերի, պայմանագրերի և եզրափակիչ ատեստավորման կազմակերպման կանոնակարգի վերամշակում:

Ձևակերպվել և ԳԿՄԿ տնօրինության հաստատմանն է ներկայացվել նոր եռակողմ - ասպիրանտ, գիտական ղեկավար և գիտական կազմակերպության տնօրեն - պայմանագրի ձև:

Պատրաստվել և տրվել է 90 որակավորման քննությունների մասին ԲՈՀ ներկայացվող տեղեկանք:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն ներկայացնելու նպատակով կազմվել են 2016 թվականին ԳԱԱ գիտական կազմակերպություններում սովորող ասպիրանտների, դոկտորանտների, հայցորդների թվաքանակի և շարժի վերաբերյալ ամփոփ հաշվետվություններ՝ համաձայն «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման» ձևի և կարգի:

2017-2018թթ. ուսումնական տարվա անվճար տեղերի ձևավորման համար համակարգվել և ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների կողմից ներկայացված ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի հայտերը:

Բաժինը ներգրավված է և իր մասնակցությունն ունի “Վերիտաս՝ Զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթության երրորդ մակարդակի կառուցվածքային զարգացում“ ծրագրում, որի նպատակն է բարելավել

Հայաստանի հետբուհական կրթական համակարը՝ այն համապատասխանեցնելով եվրոպական որակավորման շրջանակներին և Զալցբուրգյան սկզբունքներին: